11894 Հանձնվ 27.10.25թ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«27» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 248 - 25

Նախաձեռնող՝ ***«Մեդ Հաուզ» ՓԲԸ***
ք. Երևան, Արամի 54

Գործունեությունը՝ ***Երևան, կենտրոն Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում գտնվող հուշարձան շենքի ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացում***
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 248 - 25

«27» հոկտեմբեր 2025թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում գտնվող հուշարձան շենքի ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մեդ Հաուզ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում բնակելի և հասարակական կառուցապատման գոտում:

ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին N 1616-Ն որոշմամբ հաստատված ցանկում շենքն ընդգրկվել է որպես հանրապետական նշանակության հուշարձան (պետ. ցուցիչ՝ 1.6.206.7):

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակը Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում գտնվող հուշարձան շենքի ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացումն է:

Նախագծվող շինությունը գտնվում է Երևանի Կենտրոն վարչական շրջանի Արամի և Կողբացի փողոցների հատման մասում՝ կարմիր գծի վրա: Տարածքի հարևանությամբ գոյություն ունեն բնակելի և հասարակական նշանակության շենքեր: Ամբողջական համալիրը եռահարկ է, մասամբ նկուղային հարկով, եզրային, Ռ-ձևին մոտ հատակագծով, 45.0-69.6 մետր արտաքին չափերով է: Շինության բացարձակ բարձրությունը մինչև վերին քիվի նիշը կազմում է 17,6 մետր: Առաջին հարկի հատակի նիշը բարձր է մայթի նիշից մոտ 0.65-0.5 մետրով:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինության հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամքարաբետոնով, 0.8-1.2 մետր հաստությամբ պատերն իրականացվել են տեղական սև գույնի տուֆ քարից՝ «միդիս» տիպի շարվածքով, հիմնականում կիրավազային շաղախի կիրառմամբ: Արամի և Կողբացի փողոցի կողմից շենքի պատերն ունեն կամարաձև բացվածքներ: Ծածկերն իրականացված են փայտից և միաձույլ երկաթբետոնից: Ուղղաձիգ կապն ապահովվում է չորս սանդուղքների միջոցով, որոնք իրականացված են պողպատե թեքահեծաններով, միաձույլ երկաթբետոնե հարթակներով և հավաքովի երկաթբետոնից պատրաստված հատավոր աստիճաններից:

Միջնապատերն իրականացված են փայտե կոնստրուկցիաներով և պեմզաբետոնով:

Փայտի կրող կոնստրուկցիաներով տանիքը լանջավոր է՝ արտաքին, կազմակերպված ջրահեռացմամբ: Տանիքի բացարձակ բարձրությունը մինչև վերին նիշը կազմում է մոտ 20 մ:

Բակում առկա է հիմնական շինությանը կից կառուցված նոր շինություն, որը բաղկացած է երկու մասից՝ երկու և մեկ հարկանի հատվածներից: Կոնստրուկտիվ սխեման լուծված է միաձույլ, երկաթբետոնե կարկասով: 0.00 նիշից բարձր պատերը քարից են (կանոնավոր քարերի շարվածք), որը հանդիսանում է որպես կարկասի լցվածք: Սյուների առավելագույն քայլը 8,3 մ է: Սյուները 40x40 սմ կտրվածքով են, պարզունակները 40x55 սմ: Ծածկերը հավաքովի սալերից են 22 սմ հաստությամբ՝ պարփակված պարագծով 40x55 սմ կտրվածքների հեծաններով: Հիմքերը ժապավենային են՝ 60x50 սմ կտրվածքով, միաձույլ երկաթբետոնյա: Առաջին հարկի բարձրությունը 4,4 մ է, Երկրորդ հարկինը 4,5 մ:

Շենքը կառուցվել է 1902թ.՝ որպես բանկի Երևանի բաժանմունք:

Ընդհանուր համալիրից առանձնացվել է բանկի շինությունը և նախագծում տրվել է դրա սկզբնական տեսքը, հատակագծային լուծումները և ապամոնտաժված հատվածները: Շինությունն ունեցել է եզրային ուղղանկյունին մոտ հատակագիծ՝ արտաքին առավելագույն չափերով կազմելով 27.5-45.0 մետր: Շենքն իր սկզբնական վիճակում իրենից ներկայացնում էր երկհարկանի դասական ճարտարապետական ոճի կառույց: Շենքի ճակատներն իրականացված են սրբատաշ տեղական սև տուֆ քարից: Շենքի երկրորդ հարկը ձևավորված է կորնթական խոյակներով, որմնասյուներով: Շենքն ունի հարուստ ձևավորված ճակտոններ, ֆրիզ, քիվ և կամարաձև պատուհաններ:

Բակում 2002 թ.-ին կառուցված անավարտ շինությունը բաղկացած է երկու մասից՝ երկու և մեկ հարկանի հատվածներից: Կառույցի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է, իսկ ծածկերը հավաքովի երկաթբետոնե սալերից: Պատերն իրականացված են կարկասի լցվածքի ձևով, ունեն 400 մմ հաստություն, իրականացված են տուֆ քարի մանրահատ բլոկներից: Տանիքը միալանջ է, արտաքին ազատ ջրահեռացմամբ: Նախագծով նախատեսվում է շինությունների ամրակայում, վերականգնում և փոփոխում:

Նախագծով հուշարձանի տանիքային հատվածում մետաղական կրող կոնստրուկցիաներով նախատեսվում է վերնահարկ և բացօթյա հարթակ, որում նախատեսվում է կազմակերպել սրճարան, իսկ տանիքի ծավալի մեջ ժամանցային տարածքներ (երեխաների համար խաղասրահներ): Նշված վերնահարկը նախագծվել է գլխավոր ճակատից 8,0 մետր ետնահանջով, տանիքի բարձրությամբ:

Արամի փողոցի կողմից բակի մուտքը փակվել է: Նախագծով նախատեսվում է այն վերաբացել և բերել նախկին տեսքի, իսկ մեկ հարկանի ներքին տարածքն օգտագործել որպես սրճարան: Երկրորդ հարկի 6.3 մետր բարձրության հատվածում և դրանում տեղադրված գանձապահարանի հաշվին նախատեսվում է լրացուցիչ հարկ: Շինության հիմքերի ամրացման

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արդյունքում, ինչպես նաև առաջին հարկի հատակի նիշի բարձրացմամբ (45 սմ) նախատեսվում է կառուցել նկուղային հարկ:

Առևտրի կենտրոնի այցելուների, ինչպես նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար շինությունում նախատեսվում է իրականացնել լրացուցիչ վերելակ: Համալիրի բակային հատվածում 2002 թ.-ին (նախկինում կառուցված կցակառույցի տեղում) իրականացվել է 1-2 հարկանի նոր շինություն:

Նախատեսվել է կցակառույցի վերակառուցման աշխատանքներ հուշարձանի օգտագործման և առևտրի կենտրոնի ստեղծման, պատմականորեն ձևավորված համալիրի հետ նոր կառույցի ներդաշնակությունն ու հորինվածքային փոխկապակցվածությունն ապահովելու նպատակով:

Տանիքի փայտ կրող կոնստրուկցիաները նախատեսվում է ապամոնտաժել և այն իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով՝ պահպանելով դրա ձևը, թեքությունը և գագաթի բարձրությունը: Վերականգնման համար բավարար վիճակում գտնվող գլխավոր մուտքի ճակատի պատի վրա ամրացված որմնաքանդակի և գլխավոր մուտքի մոտ պահպանված «Մոր ու մանկան» քանդակը նախատեսվում է տեղադրել ներքին տարածքի առաջին հարկում՝ համալիրի պատմությունը ներկայացնող սրահում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

-հողի մակերեսը՝ 1724.4 մ^2,

-հուշարձան շենքի կառուցապատման մակերեսը՝ 857 մ^2,

-կցակառույցի կառուցապատման մակերեսը՝ 397.4 մ^2,

-հարկերի գումարային շինարարական մակերեսը՝ 5423 մ^2,

-անջրանցիկ մակերեսը՝ 470 մ^2,

-մեքենաների կայանատեղիների քանակը՝ 17 տեղ:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար նախատեսվել են թեքահարթակներ:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առանձին ամրանային ձողերն ու հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն, ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվելու են շինարարական հրապարակ, որտեղ կատարվելու է դրանց պահեստավորումն ու տեղադրումը:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, 6,8 տ կենցաղային և մոտ 370 մ^3 ծավալով շինարարական աղբն է:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 27000 մ^3 ծավալով, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր օրենքով սահմանված կարգով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել:

Ջեռուցումն ու օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

Շենքի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը նախատեսվում է Մաշտոցի պողոտայով անցնող D= 400 մմ ջրատարից, կոյուղին նախատեսվում է միացնել Ե. Կողբացի փողոցով անցնող D= 400 մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ Ե. Կողբացի փողոցով անցնող D= 400 մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվելու են մատակարար ընկերության կողմից: Ջրամատակարարումը կիրականացվի կնքելով համապատասխան պայմանագիր Երևան ՋՕԸ հետ:

Շենքի գազամատակարարումը (116 խմ/ժ ծախսով) նախատեսվում է համաձայն տեխնիկական պայմանի՝ ԳԲԿ Ջրվեժը սնող D= 300 մմ կողմնատար գազատարից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում շենքի էլեկտրամատակարարումը 500 կՎԱ դրվածքային հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, կառուցելով նոր ենթակայան: Ենթակայանը նախատեսվում է շենքի բակային հատվածում:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճատև և թույլատրելի նորմերի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որը կրելու է ժամանակավոր բնույթ ինչը նորմերի սահմաներում է: Աշխատանքներն իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի շինարարական հրապարակի ջրցանում՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար,
- գործունեության ենթակա տարածքը ցանկապատվելու է, շենքերն ու շինությունները ծածկվելու են համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
-պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակն ու իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,
- շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է ներգրավել աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով,
-շինարարական թափոնները և կենցաղային աղբը տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ հատուկ հատկացված վայր պայմանագրային հիմունքներով,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- բացառվելու է շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, փակցվելու են հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.
-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի պարբերական չափումներ, ամսական մեկ անգամ հաճախականությամբ, տեղադրել նաև առցանց չափիչ սարք,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի շինարարական հրապարակի ջրցան՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում, պարբերաբար,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
-հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- Երևանի ավագանու որոշման համաձայն՝ շինարարական հրապարակում կտեղադրվեն փոշու առցանց չափող սարքեր:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 2650000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննական գործընթացում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Միաժամանակ հանրային լսման ժամանակ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից նախաձեռնողին առաջարկվել է ապահովել նորմավորված ավտոկայանատեղերի քանակը և հրշեջ մեքենաների լիարժեք մոտեցումը շենքին:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, քաղաքաշինության, կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել են դրական կարծիքներ:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության

աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելու նպատակով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած հոսքաջրերը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
5. Ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
6. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մեդ Հաուզ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց 54, 54/1, 54/3 հասցեներում գտնվող հուշարձան շենքի ամրակապման, վերականգնման, փոփոխման և կցակառույցի իրականացման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան